

С. 1930/829

9978

ՀԱԳԱՐԱԿԱՐ

ԼԻԳՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԳԱԼՈՎԱՐ ՎԱՐՉՈՎԹՅՈՒՆ
№ 7 ԲԱՆՎՈՐԱԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ № 7

Դ. ԱՎԵՐՑԱՆՈՎ ՅԵԿ Ա. ԽԱՎՐՈԶՈՎ

ՅԱՅԼԻԿՈՒՅՔ
ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՅՈՒՏՈԽԵԴԵՆԻ
Ակադեմիա Խավ
Հ. Հ. Հ. Հ.

ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՃԵՄՔՈՒՄ

ՆՈՐ ԿԵՆԵՑՈՒԹՅՈՒՆ ՏԵՍԱՐԱԿՈՒՅԹ

ՊԻԵՍ Յ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ

Փոխադրություններ

891.71
Ա-79

ԳԵՏԱԿՈՒՅՔ ՀՐԱՄԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԵՐԵԴԱԿՈՒՅՔ—1928

Сат601

17 JUL 2006
C1930/829
25 NOV 2010
ԳԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՒԽԱՎՈՐՈՒԹ. ԳԼԽ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
№ 7 ԲԱՆԳՅԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ № 7

891.71
Ա-79

Վ. ԱՎԵՐՅԱՆՈՎ ՅԵՎ Ա. ՆԱՎՐՈՅՈՎ
БИБЛИОТЕКА
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՃԵՄՔԻՆ

ՆՈՐ ԿԵՆՑԱԳԻ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ

Յ գործողությամբ

Փոխադրություն



21.02.2013

9978



Հր. № 866: Գրասեպիվար № 1048 (բ): Տիրաժ 1500
Պետհրատի տուաջին տպարան Վաղարշապատում
Պատվիր № 255

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

ԱԼԵՔՍԱՆ ԲՈԽՅԱՆ, փականագործ, 28 տարեկան.
ՎԱՐՍԵՆԻԿ, նրա կինը, 22 տար.
ԱՇԽԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ, 25 տ.
ԱՆՆԱ ԱՐԻՄ, Վարսենիկի մայրը, գեղջկուհի, 55 տ.
ՆԻԿՈՂՈՍ ԱՊԵՐ, Աննալի ամուսինը, գյուղացի, 60 տ.
ԳԱՐԵԳԻՆ, բանվոր, 40 տ.
ՍԱՄՍՈՆ, կոմիսիոնական.
ԲԱՆՎՈՐ.
ԿՈՄՅԵՐԻ ՏԱԿԱՆՆԵՐ.



59707-66

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

Բոլոյանի ընդարձակ սենյակը, կահ-կարասին պարզ, բանվորական, Սենյակի խորում, որորոցի մոտ նստած ե Վարսենիկը, Աննա արին սպիտակեղեն ե հարթուկում:

ՏԵՍԻԼ Ի

ՎԱՐՄԵՆԻԿ ՅԵՎ ԱՆՆԱ ԱՔԻՐ

ԱՆՆԱ. ԱՔԻՐ.—Վոր նալում եմ քեզ, Վարսենիկ, սիրուս ցավում ա. բոլոր կնանիք ել ապրում են կնկա պես, մենակ դու յես, այ անբախտ, վոր տանջվում ես մարդուդ ձեռին: Իրիկնահացի ժամանակ ա, իսկ քո մարդը ժողովներում իրա համար ինկուահչի յա տալիս հըմի: (Հառաջում ե): Տուն գալիս ել՝ քիթը կոխում ա զրքի մեջ, ել չես կարըմ բան իմանալ: Վոչ տան ա նակում, վոչ բանի: Սովորում ա... Ռւսում ա առնելում... Մարդ կա՝ զրել-կարդալուց խելքն ավելացնում ա, մարդ ել կա՝ թացնում... Քու մարդն ել կոռվորի ու մեկ ել տեսար քիթը տնկեց ու—մենք անտիլիգենս ենք...

ՎԱՐՄԵՆԻԿ.— Յես կարծում եմ, վոր, մայրիկ, ռւսումը մարդուն փաս չի: Յեթե սիրում ա, չի թողնի: Իսկ յեթե չի սիրում — անկիրթ մարդն ել կթողնի—կհեռանա:

ԱՆՆԱ. ԱՔԻՐ.— Ե՞ս, ջանա, հիմի ուրիշ կարգեր են. պսակվում են, մի ամիս ապրում—ու զագու. «Ել չեմ ուզում ապրել», զագուում ել ուրախանում են. «բաժանվեցեք, սիրելիք»: Յեղանաքիրն ինչքան աշխատեց Պետրոսի համար: Տկլոր տղա յեր, բանտերում նստած. փեսա դարձրին, վոտն ու գլուխը լը-վացին, հազցըին, կապեցին ու մարդ շինեցին: Բայց հենց վոր կոմիսար զառավ ու ձեռը զիրք առավ, գնաց քաղաք ու ինչվոր բանֆակի աղջկա հետ ընկափ: Ու հիմի աստծով միիթարվես...

ՎԱՐՄՍԵՆԻԿ.— Ալեքսանն եղածու չի. Յես թեկուզ կրթություն չունեմ, բայց նրանից վատ խոսք չեմ լսել եղ մասին: Գիտեմ, վոր նա ինձ հետ ձանձրանում ե. վոչ խոսում ե, վոչ խորհուրդ ե հարցնում: Հըե Աշխենը—տղամարդու պես բան ե. ամեն ինչ գիտի. գրում ե, խոսում ե. ինձ ել ուզում ե գրել-կարդալ սովորեցնել:

ԱՆՆԱ ԱՔԻՐ.— Յես քու տեղն ըլնելի—չելի թողնի, վոր նա ես առևնը վոտ դնի: Ես ամի տարի յա քաղաքում ապրում ես—դեռ աչքաբաց չես դառել: Ասածս միտդ պահիր—նա մարդուդ գլխահան ա անելու:

ՎԱՐՄՍԵՆԻԿ.— Գրել—կարդալը...

ԱՆՆԱ ԱՔԻՐ.— Վոչ թե գրել-կարդալը, Աշխենը: Ուսում... Դա մենակ խոսք ա, վոր Աշխենի հետ ժողովում քաշ գա: Գրչանք ա առել: Հարժաւատ ես, ի՞նչ ես, վոր փողդ գրքի յես տալի: Ավելի լավ չի ընտանիքիդ վրա ծախսես կամ գեղը զըրկես: Տունը փուլ ա զալի, ամեն ինչ ձեռից գնացել ա, լավ եր մի սել ճարեցին հացը կրելու:

ՎԱՐՄՍԵՆԻԿ.— Ալեքսանն ասում ե—շուտով բոլորի դրությունն ել կթեթևանա: Հողն, ասում ե, հիմի գեղացունն ե. դրանից հետո, ասում ե, ամեն ինչ լավ կերթա: քանի վոր մեր իշխանությունը Խորհրդացին ե:

ԱՆՆԱ ԱՔԻՐ.— Տանս հաց ու պանիր ըլնի, թե չե իշխանությունը միշտ մերն ա ու մերը:

(Մտնում է Սամսոնը):

ՏԵՍԻԼ II

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ՍԱՄՍՈՆ

ՍԱՄՍՈՆ.— Ճիշտ ե, ճիշտ, Աննա աքիր... Յերանի փորսվ, ներողություն, հոգով աղքատներին, վոր պիտի կշտանան: Զեր ձեռը, Աննա աքիր: Իմ հարդանքը, Վարսենիկ:

ԱՆՆԱ ԱՔԻՐ.— Աչքիցս հեռացիր, անաստված: հեռացիր—կորիր, գեշ:

ՍԱՄՍՈՆ.— Մեզ ինչ կա վոր, Աննա աքիր, դու պետք ե քու մեղերի համար պատասխան տաս ասածու առաջ: (Վարսենիկին). Քեռի Ալեքսանը չի յեկել դեռ:

ՎԱՐՄՍԵՆԻԿ.— Զե: Ինչպես յերկում ե ելի ժողովներում բռնվեց:

ՍԱՄՍՈՆ.— Իսկ յես կարծում եյի յեկեղեցում ժամերգություն ե լսում: Իսկ դու Բնչ ես կարծում, Աննա աքիր:

ԱՆՆԱ ԱՔԻՐ.— Զեզ նման սատանաներին շուտով յեկեղեցի յել չեն թողնի:

ՍԱՄՍՈՆ.— Ո՛, ինչ սարսափելի բան կլինի... Բարեխոսիր, Աննա աքիր, հաստափորների առաջ, վոր դրախտում մի տեղ տան ինձ: Տերաեները կոմիերիտականներին սիրում են, իսկ մենք նրանց—ավելի: Այ, Աննա աքիր, նայիր ես աստվածային պատկերներին (Յուզ է տախս «Անասվածը»):

ԱՆՆԱ ԱՔԻՐ.— Ու աստված ել եսպես լըրերին համբերում ա: Կորի, անաստված, քեզ տեսնել չեմ ուզում:

ՍԱՄՍՈՆ.— Ախր մի նայիր հա, Աննա աքիր, տես աստվածինչպես ե նկարված—ցիլինդրը գլխին...

ԱՆՆԱ ԱՔԻՐ.— Զեռ քաշիր, ասում եմ:

ՍԱՄՍՈՆ.— (Մոտեցնում է յերեսին). Ախր մի նայիր ե: (Աննա աքիրը հարձակվում է նրա վրա ձեռքի հարրուկով):

ԱՆՆԱ ԱՔԻՐ.— Սպասիր հա, պատիժդ կստանաս:

ՍԱՄՍՈՆ.— Սուրբ, սուրբ, սուրբ, վողորմյա մեզ... (Աննա աքիրը վազելով պտտվում է սեղանի շուրջը Սամսոնի յետելից):

ՍԱՄՍՈՆ.— Ամեն, ամեն, քարը վերցրեց, ընկավ յետելից: (Մտնում է Ալեքսանը՝ քերերը ձեռին):

ՏԵՍԻԼ III

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ԱԼԵՔՍԱՆ

ԱԼԵՔՍԱՆ.— Ելի կովիլ եք:

ՍԱՄՍՈՆ.— Զե, քեռի, կրօնի շուրջը գիսպուտ ելինք սարքել: Աննա աքիրը—Գարեգին յեպիսկոպոսն եր, իսկ յես—Հայկ Աղատանը: Մի քիչ տաք վիճեցինք, բայց—վոչինչ: Հետաքրքիր եր...

ԱԼԵՔՍԱՆ.— Իսկ մեզ մոտ զեկուցում կար մանկական մսուր հիմելու մասին: Զեկուցողն Աշխենն եր: Միջազգային դըրության մասին ել զեկուցեց Մուավանը: Լավ ուտացրեց Փրանսիացիներին: Գերմանական սոց-դեմոկրատներին ել պակաս չկերցրեց...

ԱԱՄՄՈՒՆ. — Իհարկե՛ «Կոմմունիզմի Ազբուքենը» անդիր գիտի,
յերսի:

ԱԼԵՔՍԱՆ. — Մեր գործարանի բանվորուհիներն ավելի մսուբով
հետաքրքրվեցին: Ու հասկանալի էն. ժամանակ ե, վոր կինը
թողնի խոհանոցն ու յերեխայի փալասները և տղամարդի
հետ վոտ փոխի:

ԱՆՆԱ. ԱՔԻՐ. — Տղամարդու հետ վոտ փոխի... Ով գիտի իրիկ-
նահաց ես ուզում:

ԱԼԵՔՍԱՆ. — Զեմ հրաժարվի:

ԱՆՆԱ. ԱՔԻՐ — (Նստում ե). Յես ել ելի ժողովք գնացել, չկարա-
ցի ընթրիք պատրաստեմ... Ճառն ել դե չի կշացնում...
Մոավյանը խոսեց գնաց, յես ել լսեցի ու քեզ առանց ընթ-
րիքի թողի: Կերեք, հալալ ըլնի:

ԱԼԵՔՍԱՆ. — Կեցցես այ զոքանջ. թրի պես կտրեց: Յեթե լուրջ
ես ասում, յես ուրախ եմ, աղնիվ խոսք:
(Աննա աքիրը դուրս ե գնում):

ՏԵՍԻԼ. IV

ՎԱՐՍԵՆԻԿ, ՍՍՄՄՈՒՆ, ԱԼԵՔՍԱՆ

ԱԼԵՔՍԱՆ. — Վարսենիկ, իսկ դու ինչն յես եղ պուճախը մտել ու
դուրս չես գալի:

ՎԱՐՍԵՆԻԿ. — Յերեխին քննեցնում ելի. հենց նոր աչքը փա-
կեց:

ԱԼԵՔՍԱՆ. — Ամսի 1-ին մոռորը բացելու լին: Յերեխին կտանք
մտոր, իսկ դու, Վարսենիկ, կարող ես կուրսեր գնալ: Ու-
սում կարնես...

ՎԱՐՍԵՆԻԿ. — Ինչ կա վոր, յեթե ուզում ես, կերթամ: Բայց չը-
գիտեմ վոնց անեմ յերեխին: Ամբողջ որն առանց մոր, մեղք
ե (Խցունեների միջից): Եղ քորփեն խալիի ձեռին վժնց
պտի մնա:

ԱԼԵՔՍԱՆ. — Ելի արտասուք... Ամբողջ որն իրար չենք տեսել,
գալիս եմ թե չե—արտասուք ու գժգոհություն: Սա ախր
ձանձրալի յե, անտանելի:

ՍՍՄՄՈՒՆ. — Առանց մոր ավելի լավ կմեծանա—ինքնուրուցն տը-
ղա, իսկական կոմունիստ կղառնա:

ԱԼԵՔՍԱՆ. — (Մոտենում ե Վարսենիկին): Զարմանալի բան ես,
Վարսենիկ: Վժնց չես հասկանում, վոր յես քու լավը եմ
ուզում. ինձ ձեռնտու յե, վոր դու աղախնի տեղ բան անես:
Բայց յես եղ բանը չեմ ուզում: Յես ուզում եմ, վոր դու ապ-
րես կարգին, խելացի կանքով, իսկ դու մորդ մի լիի: (Վար-
սենիկը արտավում ե). Դե, հերիք ե, Վարսենիկ... Պետք ե
ուրախանաս, վոր կնանոնց առաջ ձանապարհը բաց ե: Ե՞ս,
Վարսենիկ... Յես նոր կանքը պարզ տեսնում եմ ձեռիս միջի
պես, միայն պետք ե աշխատել հասկանում ես...

ՍՍՄՄՈՒՆ. — Իմ կամքերտուհին յերեկ ինձ հայտարարեց. «Վոչ
յերիսի փալասներ, վոչ խոհանոց, ասում ե, հերիք ե...
չերիք ե, ասում ե, ձեր ձեռին տանջվենք... Ճաշել ես ու-
զում—հրե ձաշարանը, յերեխան կտանես մսուր, մենք ել
կերթանք բանֆակ»... Ահա... (յերգում ե). «Հեյ, հեյ, կոմյե-
րիտական ընկերներ».

(Ներս ե մտնում Աննա աքիրը)

ՏԵՍԻԼ. V

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ. ԱՆՆԱ. ԱՔԻՐԸ

ԱՆՆԱ. ԱՔԻՐ. — Եյ, յերգասան, ընթրիք ուզում ես:

ՍՍՄՄՈՒՆ. — Անպայման...

ԱՆՆԱ. ԱՔԻՐ. — Անպայման... (Ննազ ե անում): Քո կոմյերիտու-
հին քեզ չի կերակրել, թե ձաշարանները զեռ չեն շինել:

ՍՍՄՄՈՒՆ. — Դես չե:

ԱՆՆԱ. ԱՔԻՐ. — Տհամր... Դե, սստեցեք, (Նստում են սեղանի
ըուրօք): Ալեքսան, դու լավ կանես, աղջկանս միտքը չպըղ-
տորես զանազան կոմունիզմներով: Առանց եղ նրա կան-
քը քաղցր չի, իսկ դու լացացնում ես շարունակ: Գոնե
խղճա:

ԱԼԵՔՍԱՆ. — Հիմարությունից ե լաց լինում:

ԱՆՆԱ. ԱՔԻՐ. — Հիմարությունից... Զեզ մոտ բոլորը հիմար են:

ԱԼԵՔՍԱՆ. — Ներողություն, բոլորը չե:

ԱՆՆԱ. ԱՔԻՐ. — Գիտեմ դուք ում եք յելոր համարում, զե-
տեմ:

ԱԼԵՔՍԱՆ. — Դու վոչինչ ել չգիտես, մայրիկ, չգիտես: (Առողջուն):

ԱՆՆԱ. ԱՔԻՐ. — Ես ել կը մնք առ ինչ-վոր կորպերատիվներ ենր սարքել, բայց արի տես մի բան ձրի չեն տալիս: Զրին ել գլուխը քարը, արծաթ ես տալի — են ել չեն վերցնում: Առավոտը գնացել եմ, թե «ինձ ձավար ահարկավոր», ու ձակովը թափակորի պատկերով դաճած հիսուն կոպեկանոց եմ տալի, իսկ նրանք յետ են դարձնում: Սա, ասում ա, մենք չենք վերցնում: մենք, ասում ա, մեր խորհրդալին փողն ունենք:

ՍԱՄՍՈՆ. — Մենք, Աննա աքիր, հիմի կայուն վալյուտա ունենք: ԱՆՆԱ. ԱՔԻՐ. — Յես ել եղ եմ ասում — վլլում եք, բայց փող չկա:

ՎԱՐՍԵՆԻԿ. — Մայրիկ, ձենդ կտրի. ենպես բաների մասին ես խոսում, վոր չես հասկանում:

ԱՆՆԱ. ԱՔԻՐ. — Հիսունուհինք տարի ապրել եմ, ամեն բան հասցել եմ, հիմի անհասկացող դառամ...

ՍԱՄՍՈՆ. — Դե, հերիք ե, շնորհակալ եմ: (Մոտենում ե յերեխայի որորոցին):

Եճիր, մեծացիր
իսելքով ու մարմնով
ու դարձիր սիրուն
պիոներ...

ԱՆՆԱ. ԱՔԻՐ. — Հերիք ա անաստվածություն անես. հերիք ա... Դու փեսիս հետ վերջացած, աստծու ցուցակից դուրս յեկած մարդիկ եք. ել եղ բեխուն ձեռ մի տա, մի կեղտոտի նրա հրեշտակի մաքրությունը: Քու հերն ու մերը մթած կասես քեզ յիկեղեցում չենք կնքել:

ՍԱՄՍՈՆ. — Հիմարություն են արել:

ԱՆՆԱ. ԱՔԻՐ. — Քեզանից հիմար չեն:

ԱԼԵՔՍԱՆ. — (Խիս). Հիմար են թե հիմար չեն, իրենց բանն ե. իսկ յես հիմարանալ չեմ ուզում և թուլ չեմ տա իմ յերեխին լմկեղեցի տանել:

ԱՆՆԱ. ԱՔԻՐ. — (Թողնում ե ամաների հավաքումը): Եղ արդեն ըլնելու բան չի: Յես ել խորթ չեմ ու վատ բան, կարծեմ, չեմ ցանկանում: Տիսնված բան ա, բեխին հարամ թողնեն. դա մեզք կլնի նրա հոգու համար:

ՎԱՐՍԵՆԻԿ. — Զարմանում եմ, Ալեքսան. յեթե կուսակցության

մեջ գրված ըլնես, կարող ես եղագես ասել: Բայց քանի վոր կուսակցության մեջ չես, ել ի՞նչ ես մարդկանց հակառակում: Հո չի մեռնի, վոր յեկեղեցում կնքեն:

ԱԼԵՔՍԱՆ. — Հարցը վաղուց վճռված ե, ել խոսելն ավելորդ ե:

ԱՆՆԱ. ԱՔԻՐ. — «Վճռված ե»... Զե, քե մատաղ, եղագես բան չկարելի իրավունքը մորն ա:

ՎԱՐՍԵՆԻԿ. — Լոել եմ, լոել, բայց հիմի ել չեմ կարող: Յերեխեն իմն ե: Յես եմ բերել: Ուր ուզում եմ ենտեղ ել կը կնքեմ:

ԱԼԵՔՍԱՆ. — (Տեղից ցատկելով). Զենդ կտրի... ել համբերություն չկա: Ավելի լավ ե կորչեմ-հեռանամ: (Գնում ե դեպի ուրկախը, վերցնում ե զիսարկը):

ՎԱՐՍԵՆԻԿ. — (Նետվում ե դեպի յերեխան). Սիրուն ջան, անգին ջան... Վայ ինձ (լախս ե):

ԱՆՆԱ. ԱՔԻՐ. — Ինչի՞ յիմ մմացել եստեղ անաստված անհավատների մոտ. ավելի լավ ե շնորհով կորչեմ-գնամ գեղը, անկաջս հլա դինջ կըլի (Գնում ե արտավելով):

ԱԼԵՔՍԱՆ. — Ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ... Մի ինչ-վոր հիմար ծեսի համար վեճ, արտասուք... Խըզել են հին ճահճի մեջ, դուրս հանել չի լինում: Վոչ մի կողմից ել վոչ մի ոգնություն: Ի՞նչ անեմ...

ՍԱՄՍՈՆ. — Պառավը կատաղել ե:

ԱԼԵՔՍԱՆ. — (Խսում ե արսովին), Ե՛, Սամսոն, վոր իմանաս ինչ քան ծանր ե ես բանն ինձ համար:

ՍԱՄՍՈՆ. — Ի հարկե, ծանր կլնի: Բայց մի զիջի:

ԱԼԵՔՍԱՆ. — Զե, չեմ զիջելու: Մինչ վերջը իմ խոսքն առաջ պիտի տանեմ: (Գալիս ե Գարեգինը)

ՏԵՍԻԼ. VI

ՆՈՒՑՆԲ ՅԵՎ ԳԱՐԵԳԻՆ

ԳԱՐԵԳԻՆ. — Ընտանեկան տեսարան... Արցունքներ, հոգված ամուսին, զօքանչը բացակայում ե — հետեւալլ հասկանալի յե: Բարեկ ձեզ, յես մի քիչ ենպես, զարեջրատանը նստեցի, զալիս եմ կ... Հետեւալլ հասկանալի յե: Զերվոնեցը չեն մանրացնում, ասենք դրանից չկա յել... Կոմիերիտականին, յերի-

տասարդության ավանդարդին—հարգանք: Շուտով կիոխա-
րինեք մեզ, թե չե գարեջրատունը, աշնան պատճառով, դա-
տարկ ե...

ՍԱՄՍՈՆ — Ներողություն, Գարեգին, գարեջրատանը ձեզ վոչ-
վոք չի փոխարինի, դա արդեն մենակ ձեր գործն ե...

ԳԱՐԵԳԻՆ.— Ասացեք լինդրեմ. բա ձեր գործը վժրն ա... (Պառ-
նալով Ալեքսանդրին). իսկ դու ինչի՞ յես նոթերդ կիտել... Զո-
քանչդ և քեֆիդ դիպել, թի՞ գրքերն են հոգնեցրել... Թքիր
եղ բոլորի վրա ու (Խմելու նշան և անում)... հետեւալը հաս-
կանալի յե:

ԱԼԵՔՍԱՆ.— Դու յել բոլոր ժամանակ հանաք ես անում, մի կար-
գին խոսք չես ասում: Կատակի գլուխ չունեմ, Գարեգին:
ԳԱՐԵԳԻՆ. — Մեծ բաներ են պատահել, նշանակում ե (Աչքով և
անում Վարսենիկին):

ԱԼԵՔՍԱՆ.— Ռւզում ե յեկեղեցում կնքել, իսկ յես չեմ թողնում:
ԳԱՐԵԳԻՆ.— Հա-հա-հա... Եղպես-եղպես, հետեւալը հասկանալի
յե... (այժ ե ածում բեմը):

Գալիս ե Աննա ամիրը

ՏԵՍԻԼ VII

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ԱՆՆԱ ԱՐԻՐ

ԳԱՐԵԳԻՆ.— Ընկեր Աննա արիր Զատիկյանին իմ ամենախոնարհ
վողջունն ու հարգանքը: Բարեհանել եք բարկանալ: Հայտնի
բան ե, փուչ մարդիկ են, միշտ դեպի նորն են ուզում գնալ:
Յեկեղեցին մոռացել են, տերտերներին չեն հարգում, ուշք-
ներն ու միտքները ավել են գրքերին, լերեխաներին չեն ու-
զում կնքել: Մի խոսքով խայտառակություն... Յես քու-
տեղը լինելի, Աննա աքիր, սրանց հախիցը գալու հնարը
կդանելի, հավատա խոսքիս:

ԱՆՆԱ ԱՐԻՐ.— Մի խորհուրդ տուր, քե մատաղ, ում դիմեմ, ի՞նչ
անեմ...

ԳԱՐԵԳԻՆ.— Ես յերկու անաստվածին ել հանձնիր հեղորիքու-
նալի դատարանին—մեկ: Մի թողնի ուտեն, խմեն—յերկու...
իսկ դրանից վոչինչ չի դուրս դա—յերեք...

ԱՆՆԱ ԱՐԻՐ.— Յերանի մարդ ըլելիր, այ հարբեցող փուչ:
ԳԱՐԵԳԻՆ.— Հարբեցողը քնում ե, բայց չիմարը յերեք:

ԱՆՆԱ ԱՐԻՐ.— Ե, դու յել համ հիմար ես, համ անաստված:
ԳԱՐԵԳԻՆ.— Առաջինի մասին չեմ վիճում, յերկրորդի հետ համա-
ձայն չեմ: Իմ պապը ժամհար ե յեղել:

ՍԱՄՍՈՆ.— Հա-հա-հա... Դրա համար ես գարեջրատունը զանգա-
հարելու գնում:

ԳԱՐԵԳԻՆ.— Ե, կոմիերիտ, մեր ժամանակն ապրելիր, ավելի վաս-
հարբեցող կը լնելիր: Բավական ե:

ՍԱՄՍՈՆ.— Մի բարկանա, Գարեգին, հանաք եմ անում: Այս,
Աննա աքիր, քու բանը բուրդ ե:

ԳԱՐԵԳԻՆ.— Ես, եղ գեռ կտեսնենք: Այ, Աննա աքոր կողակիցը
կգա—մի ենպես շաղկապ ստեղծի վոր, քեֆդ դա... Լսեցի,
մթամ թե, Ցիկի նախագահի մոտ ե գալիս: Գեղը պատգա-
մավոր ե ընտրել:

ԱՆՆԱ ԱՐԻՐ.— Իմ հալիվորը քեզ նման չի, կյանքումը բերանն
արագ չի առել, իսկ աղա մարդկանց վրա յել ծիծաղել չի
սիրում:

ՍԱՄՍՈՆ.— Յես արդեն հալիվորին պրոպագանդա կանեմ: Նա-
խագահը կը կսի, յես կվերջացնեմ:

ԳԱՐԵԳԻՆ.— Զե, ախաղեր ջան, եղ ենքան ել հեշտ բան չի: Պինդ
հալիվոր ե:

ՍԱՄՍՈՆ.— Արի գրագ գանք: Յեթե պրոպագանդա չանեմ ...

ԳԱՐԵԳԻՆ.— Կես գլուժին գարեջուր:

ՍԱՄՍՈՆ.— Լավ:

ԳԱՐԵԳԻՆ.— Իսկ Վարսենիկը խի՞ չի յերկում:

ԱՆՆԱ ԱՐԻՐ.— Կարելի ա խեղճը քնել ա: Սաղ որը հանգիստ

չունի: Մենակ գուք չեք, վոր չեք քնում, անաստվածներ:

ԳԱՐԵԳԻՆ.— Վոչինչ, Աննա աքիր, մենք ել կերթանք հիմի քնե-

լու: Տեսություն: Ել, Սամսոն: (Գնում են):
ԱՆՆԱ ԱՐԻՐ. — Գնացին, թանգագին ընկերները: Ո՞հ, աեր աս-
տված, վայ մեզ մեղագորներիս... Մարդու պես չենք ապրում
սկի... Ո՞հ-ո՞հ-ո՞հ... (Հորանիզում ե), Գնամ յես ել քնեմ:
(Գնում ե ներանց յետելից)

ԱԼԵՔՍԱՆ.— Հանգստացան: Կարդամ թե չե. Ել կարդալու հավաս
մնաց, մարդու տակնուրվա արին: (Գնում ե դեպի անկողինը յել
լույսը հանգնում):

ՎԱՐՍԳՈՒՅՑ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԿՐՈՐԴ

Նույն սենյակը: Վարսենիկն ու Աշխանը սեղանի շուրջը:
Նրանց առջեվլ զիրը:

ՏԵՍԻԼ I

ՎԱՐՄԵՆԻԿ ՅԵՎ ԱՇԽԵՆ

ՎԱՐՄԵՆԻԿ.—Մ. հ. ն. ք= Մենք: Բաւ-տ-ր-ուկ չ-հ. ն. ք= Սարուկ
չենք: Կոմ-մունիգ-մը մ-ե-ր հաղթական ջահըն եւ Կոմու-
նիգմը մեր հաղթական ջահն եւ:

ԱՇԽԵՆ.—Ահա, կարդում ես արդեն: Մի էրկու շաբաթ եւ—ջրի
պես կկարդաս: Դու ընդունակ ես, Վարսենիկ:

ՎԱՐՄԵՆԻԿ.—Ինչ ես ասում, Աշխեն... Ֆես ամբողջ կյանքս գե-
ղում եմ ապրել ու ձեռս սկի գիր չեմ առել: Հմի զարմանա-
լի յե թվում, թե Քմնց եմ կարդում:

ԱՇԽԵՆ.—Մենակ դու չես եղախս, Վարսենիկ: Մինչև հեղափո-
խությունը յես ել անգրագետ ելի, իսկ հմի բանֆակ եմ մըտ-
նելու, պետք եւ ուսումն շարունակեմ:

ՎԱՐՄԵՆԻԿ.—Դու լավ, բախտավոր աղջիկ ես, Աշխեն:

ԱՇԽԵՆ.—Բախտավոր... Զգիտեմ, Վարսենիկ: Գուցե դու ինձա-
նից բախտավոր ես... Դու մարդ ունես, յերեխա ունես:

ՎԱՐՄԵՆԻԿ.—Ֆես վոչինչ, Աշխեն, գոհ կըլնեցի, միայն շատ ան-
հանգիստ եմ: Մարդիկ շարունակ յերեսովս են տալիս, թե
յերեխեղ, ասում են, անկնունք եւ իրան ասում եմ—բար-
կանում եւ մերս ել մի կողմից... Մենք, իհարկե, գեղացի
յենք, կարելի յե չենք ել հասկանում, բայց ուզում ենք մար-
դավարի ապրել:

ԱՇԽԵՆ.—Ե՛, Վարսենիկ... Թքիր մարդկանց ասեւ կոսեների վրա:
Զարժի իսավար մարդկանց ասածը բանի տեղ դնել: Այ,
Աննա աքիրը... Լավ, բարի կնիկ ե, բայց նորը չի կարո-

դանում հասկանա... Նրան խելք հասկացնելը դժվար ե. պա-
ռավ ե... Բայց դու պետք ե զարգանաս: Դու դեռ շատ ջա-
հել ես, ընդունակ, գեղեցիկ... Այ, կակսես սովորել, յես քեզ
կոգնեմ, ամեն բան ել կհասկանաս և Ալեքսանին ել չես
մեղադրի, այլ, ընդհակառակը, ոգնական կլինես նրան:

(Մտնում ե Աննա աքիրը)

ՏԵՍԻԼ II

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ԱՆՆԱ ԱՔԻՐԸ

ԱՆՆԱ ԱՔԻՐԸ.—Սովորում եք .. Վախտ եք գտել: Եսոր կիրակի յե,
պետք եւ բազար գնալ, իսկ սա եստեղ նստել ե գրքերը ձե-
ռին—խանումի պես...

ՎԱՐՄԵՆԻԿ.—Հմի բոլորն ել սովորում են: Հըես Աշխենն ուզում
ե բանֆակ մտնի (զնում ե դեպի սրանցը յեկ վեցնում ե
յերեխան):

ԱՆՆԱ ԱՔԻՐԸ.—Աշխենը քեզ որինակ չի: Նո իրա կյանքն ունի,
մենք մերը (Աջսեն): Այ, աղջիկս, յեթե դու սրան սո-
վորեցնելիք մորը հարգել—լավ կըլներ. թե չե շատ ե փրկում:

ԱՇԽԵՆ.—Իսկ դու, Աննա աքիր, փոխանակ եղած ինուելու,
նստիր մեզ մոտ գիրք կարդանք, խոհանոցը չի փախչի:

ԱՆՆԱ ԱՔԻՐԸ.—Հմ' մ, դու պըտի ինձ բան սովորեցնես. մենք ել
մեր խելքն ունենք:

(Մտնում ե Գարեգինը)

ՏԵՍԻԼ III

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ԳԱՐԵԳԻՆ

ԳԱՐԵԳԻՆ.—Կին-բաժնի ժողովին իմ խոնարհ հարգանքը: Դու
եստեղ, Աննա աքիր, նախագահ ես:

ԱՆՆԱ ԱՔԻՐԸ.—Բոլ ա լեզուդ քոք ածես. ըեխա չես, արդեն քա-
ռասուն տարին տակդ ես գրել:

ԳԱՐԵԳԻՆ.—Ինչ անենք վոր, Աննա աքիր. քու մարդն ել վաթ-
սունի մոտ ե, բայց ճրագով վոր ման դաս, թայը չես գտնի:
Բոլոր ժամանակ ժողովներ ու թանգարաններ ե գնում: Պա-
տահեցի, պատմեց, թե պոեզումը նստել ե մի կնկա մոտ,
զուխիների հոտ, բան... Հետեւալը հասկանալի յե:

ԱՆՆԱ. ԱԹԻՐ. — (վախեցած). Կնկա մհտ... Լեզուդ չորանամ:
ԱՇԽԵՆ. — Մի վախի, Անսա աքիր, սկի բան չկա: Հանաք և առնում:

ԳԱՐՄԵՆԻԿ. — Ինարկե, հանաք և անում:
ԳԱՐԵԳԻՆ. — Ե՛, նախշուններ, վճնց են ձեր գրքերն ու ընդհանրապես աջողությունները:

ԱՇԽԵՆ. — Կարծում ենք, զոր մի ամիս հետո կարելի կը լի քաղզրագիտություն կարդալ:

ԳԱՐԵԳԻՆ. — Այո, լավ ժամանակներում եք ապրում գուք:

ԱՇԽԵՆ. — Ի՞նչ կա վոր, զու հո ձեր չես:

ԳԱՐԵԳԻՆ. — Ծերը ձեր չեմ, բայց վինտեր խախտվել են: Ամեն տեղ Գարեգինը յեղել ե, ցուրտ ու սով և տեսել ու... բանու և նստել: Հետեւալը հասկանալի յե:

ԱՆՆԱ. ԱԹԻՐ. — Ուրեմն դժւ յել ես բանու նստել:

ԳԱՐՄԵՆԻԿ. — Ի՞նչ կա վոր... նստել ե. հո գողության համար չի նստել քաղաքական ե: Հիմի բանտից գուրս յեկածները ամենաիսկական մարդիկն են:

ԱՆՆԱ. ԱԹԻՐ. — Մարդիկ... Խալիսի ճաշը վաղուց պատրաստ ա, իմ մենք եստեղ նստել դուս ենք տալիս: Մարդդ կդա բնչ կասի:

ԳԱՐՄԵՆԻԿ. — Դրուստ ե ասում. պըտի գնալ (յերեխան դնում ե ուրոց), Աշխեն, յերեխեն մտիկ արա... Գարեգինի հետ նստեք, Ալեքսանը շուտով կդա...
(Վարսենիկն ու Աննա ամիրը գնում են)

ՏԵՍԻԼ V

ԳԱՐԵԳԻՆ ՅԵՎ ԱՇԽԵՆ

(Աշխենը մտաքաղ ու դանդաղ գնում ե դեպի լուսամուտը)

ԳԱՐԵԳԻՆ. — Ի՞նչ կա, Աշխեն, ի՞նչի յես քիթդ կախել... (Լռություն): Ուզնում ես լուսավորել Վարսենիկին: Ղոչաղ կնիկ ես յերեսմ: Ասենք, հետեւալը հասկանալի յե:

ԱՇԽԵՆ. — Ի՞նչ ե հասկանալի... Վոչինչ ել քեզ հասկանալի չի:

ԳԱՐԵԳԻՆ. — Տեսնում եմ և հասկանում եմ: Դու մի ցավ ունես:

ԱՇԽԵՆ. — Իրավացի յես:

ԳԱՐԵԳԻՆ. — Ե՛, բա նա ի՞նչպես ե:

ԱՇԽԵՆ. — (Խիս շուռ ե զալիս). Դու մւմ մասին ես խոսում...

ԳԱՐԵԳԻՆ. — Յես դեռ խելքս չեմ թոցրել, Աշխեն... Յես քեզ որոցից եմ ճանաչում. շատ ել մտքերդ թագցնում ես, բայց գիտեմ.. Դու պետք ե հեռանաս քաղաքից, այ ինչ կասեմ:

ԱՇԽԵՆ. — Զեմ կարող, Գարեգին. դժվար ե:

ԳԱՐԵԳԻՆ. — Գիտեմ վոր դժվար ե: Դու նրա հետ խոսել ես, նա գիտեմ քու զգացումները...

ԱՇԽԵՆ. — Զեմ, չեմ խոսել:

ԳԱՐԵԳԻՆ. — Իսկ խոսելո՞ւ յես ..

ԱՇԽԵՆ. — Զգիտեմ... Նա ինձ հարգում, գնահատում ե, ի՞նչպես ուրիշները, գուցե և սիրեր, բայց...

ԳԱՐԵԳԻՆ. — Վարսենիկին ես խղճում...

ԱՇԽԵՆ. — (Անձայն լալիս ե):

ԳԱՐԵԳԻՆ. — Հետեւալը հասկանալի յե:

(Մենում ե Ալեքսանը)

ՏԵՍԻԼ V

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ԱԼԵՔՍԱՆ

ԱԼԵՔՍԱՆ. — Յես ել յեկա: Մերոնցից մարդ չկա: Աշխեն, ի՞նչ ե պատահել քեզ, լմց ես յեղել... (Մոտենում ե նրան):

ԳԱՐԵԳԻՆ. — Վոչինչ, մենք ենպես մի քիչ աչքներու թրջեցինք, ին բաներից հիշեցինք:

ԱՇԽԵՆ. — Այո, ին բաներից...

ԱԼԵՔՍԱՆ. — Իսկ յես կարծում եմի, Աշխեն, դու լաց լինել չգիտես:

ԱՇԽԵՆ. — Յես ել եղպես եմի կարծում:

ԱԼԵՔՍԱՆ. — Բայց ինչնե, ի՞նչ պատահեց վոր...

ԱՇԽԵՆ. — Թող, Ալեքսան, մեր կանացի հիմարություններին ուշ մի դարձնի...

ԳԱՐԵԳԻՆ. — Դու հլա մի տես, թե քու կնիկն ի՞նչ ե դառել... կուրսիստկա յե, վոչ թե կնիկ: Կարողում ե, քաղզրագիտությամբ և զբաղվում: Տես, պրոֆեսոր ե գուրս գտլու, քեզ խելք սովորեցնի:



ԵԽՈՅԱՆՈՒՐ
ԻՆՍԻՏՈՒԴ
ՅՈՒՆԻՑԱԴԵՆԻ
Ակադեմիա Խայր
СССР

ԱԼԵՔՍԱՆ.—Ո՞ւր ե թե. թող շուտ լինի?
ԳԱՐԵԳԻՆ.—Շուտ, շուտ... ինքդ չես սովորեցրել, ուրիշն ես
 լծել:
ԱԼԵՔՍԱՆ.—Յես մտածել եմ եղ մասին: Բան չեր գուրս գա—կինս
 ե: Նա ինձ հետ աղատ չեր զդա, բայց կնկա հետ—ուրիշ
 բան ա, նրա մոտ կբացվի:
ԳԱՐԵԳԻՆ.—Լրազիր չես բերել հետդ:
ԱԼԵՔՍԱՆ.—Զե, մոռացա. մաքիցս բոլորովին գնաց:
ԳԱՐԵԳԻՆ.—Ե՛ս, վոչինչ... մեկ-մերկու (յերգում ե):
 Տարարան... տարարան..
 Տարարարան...
 (Դուռը ե):

ՏԵՍԻ | VI

ԱԼԵՔՍԱՆ ՅԵՎ. ԱՇԽԵՆ

ԱՇԽԵՆ.—Զարմանում եմ յես եղ Գարեգնի վրա: Վոչ մի մարդ
 պրանից ավելի գժվար կլանք չի ունեցել, բայց բոլոր ժա-
 մանակ կատակում ե, ծիծառում. կարծես վեջը չի:
ԱԼԵՔՍԱՆ.—Նա միշտ եղպես ե: Յես չեմ կարող:
ԱՇԽԵՆ.—Քեզ ի՞նչ կա վոր... ի՞նչդ ե պակաս:
ԱԼԵՔՍԱՆ.—Դիտես ի՞նչ, Աշխեն, կարծես թե ամեն ի՞նչ ունեմ:
 Յեկ աշխատանք, վորին սովորել եմ, վորը սիրում եմ...
 Մանկութիւնից գործարանում եմ յեղել, ամեն մի վիճը
 ձանաչում եմ... կարծես մերկել եմ մեքենային: Յարևակա-
 յիր—շուրջդ շարժում ե, աղմուկ, անիմսերը պտտվում են,
 փոկերը դուրս ընկնում, իսկ դու անվերջ վագում ես այս
 ու այն կողմ, հետևում ես մեքենային, կարգի յես բերում,
 ընկերներդ ել կողքիդ—բոլորը կարծես մի մեծ մարմին կազ-
 մած, մետաղի սիրտը զարկում ե, թնդում—և դու մոռանում
 ես քեզ, ձուլվում ես բոլորին ու չկաս...

ԱՇԽԵՆ.—Այ, վոր սկսում ես խոսել—դեմքդ ել փոխվում ե, կար-
 ծես գու չինես, փայլում ես ամբողջովին:
ԱԼԵՔՍԱՆ.—(Նարունակելով): Այսո... իսկ վոր տուն եմ գալիս, մի
 ի՞նչ-վոր գատարկութիւն եմ տեսնում: Մենակ քեզ հետ ե,
 վոր բացգում եմ: Դիտես, Աշխեն... Յեթե կինս ենքան գի-
 տակից լիներ, ինչքան դու յես, են ժամանակ գուցե...

ԱՇԽԵՆ.—(Արագ լինիատելով): Դու իրավացի չես, Ալեքսան: Դա
 քեզանից և կախված: Վարսենիկը խելացի լի, ընդունակ, և
 յեթե դու նրան սիրում ես... Սիրում ես, ենպես չի... դու
 պետք ե այնպես անես, վոր նրան բարձրացնես, զարգացնես:
 Նա ինքը հոգով ուզում ե եղ բանը, բայց պետք ե ոգնել
 նրան առաջ գնալու: Իսկ հետո ամեն ինչ լավ կերթա: Յես
 ել արդեն ավելորդ կինսեմ... Զե վոր դու ինձ հարգում ես
 կյանքի դժվար բոպեներին:

ԱԼԵՔՍԱՆ.—Ի՞նչ ես ասում, Աշխեն... Ախր դու իմ հին բարե-
 կամն ես: Դու ինձ համար ենքան բան ես արել: Նույնը
 Վարսենիկի համար: Բու ազգեցության տակ նա սկսում է
 զարգանալ: Յես եղ զգում եմ արդեն (մոտենում ե նրան յել
 ձեռք բոնում):

ԱՇԽԵՆ.—Յես դրանում համոզված եմ... Դու դեռ բախտավոր կլի-
 նես, Ալեքսան: Իսկ յես... չգիտեմ, բախտավոր կլինեմ, թե չե:

ԱԼԵՔՍԱՆ.—Զե հմ... Հո կուսանոց չես գնալու... Զագս վոր գնամ:
 յես ու Գարեգինն անպալման վկա լինք:

ԱՇԽԵՆ.—Զե, Ալեքսան... բանն եղ չի:

ԱԼԵՔՍԱՆ.—Քա ի՞նչ... Սեր...

ԱՇԽԵՆ.—(Ընդիատելով) Յես քեզ մի բան կասեմ, Ալեքսան, յես...
 (Յերեխան լալիս ե, նա մոտենում է որորցին): Ե՛, թողնենք:

ԱԼԵՔՍԱՆ.—(Նետվում է դժվիկ նա). Ասա, Աշխեն:

ԱՇԽԵՆ.—Զե, չե. ամեն ինչ անցավ, վոչինչ (յերգում ե).

Նա-նա... նա-նա...

Բալիկս նա-նա...

(Մենում են Սամոնն ու Նիկողոս ապեր):

ՏԵՍԻ | VII

ՆՈՒՑՆՔ, ՆԻԿՈՂՈՍ ԱՊԵՐ ՅԵՎ ՍԱՄՍՈՆ

ՍԱՄՍՈՆ.—Քեռի Ալեքսան, ես հալիվորն ինձ ծիծաղու թուլաց-
 րեց: Գալիս ե ու տնքում...

ՆԻԿՈՂՈՍ ԱՊԵՐ.—Ես ինչ բան ա, ախպեր, ես մարդիկ վհնց են
 ապրում ըստեղ—չեմ հասկանում. մարդ քիչ ա մնում իւլանա...

ԱՇԽԵՆ.—Ի՞նչ տեսար, պապի:

ՆԻԿՈՂՈՍ ԱՊԵՐ.—Ել մի ասի, աղջիւ Խոքը կարինյանը ձեռա
բոնեց, անունս, ազգիս անունը հարցրեց, հետո հարց ու
փորձ արավ, թե վճաց ա ձին, ես տարվա բերքը... ամեն
ինչ հարցրեց: Պառավին ել, ասում ա, բարեիր: Ենպիս սե-
րով, սոհրաթով ընդունեց—քեզդ գա: Բանվորն, ասում ա,
դեղացու համար ա, գեղացին—բանվորի: Մենք նրա հետ
կանգնած խոսում ենք—մինը մոտեցավ իրեք-վոտնանի յա-
շիլը ձեռին: Կանգնեցեք, ասում ա, ու չխկացրեց, յիտո
«մերսի» ասավ ու գնաց... Եղտեղից գնացինք զավորը, վոր-
տեղ կարդիթ են շինում. անումն ել լավ չեմ իմանում...
Կորանք, մտածում եմ: Դժոխվի պես կրակ ա վառվում...
Վճաց են ընտեղ աշխատում մարդիկ—չեմ հասկանում:
ԱԼԵՔՍԱՆ.—Դժբախտ դեպքեր շատ են լինում, հայրիկ.
ՆԻԿՈՂՈՍ ԱՊԵՐ.—Յետո...

(Գալիս և Կարեգինը)

ՏԵՍԻԼ VIII

ՆՈՒՑՆՔ ՅԵՎ ԳԱՐԵԳԻՆ

ՆԻԿՈՂՈՍ ԱՊԵՐ.—(Շարունակում է) ... Գալիս եմ Գեղացու Տունը,
տեսնեմ ընտեղ նստած ե մեր գեղացիներից մինը, կառա-
վարիչ ա. «Ինձ տեղեկություն տվեք» ասում եմ. պատիվ
տվին մարդիկ, փափուկ աթոռի վրա նստացրին. պրուժին-
ները ճռճռում են, վճաց վոր փայտոն...

ԳԱՐԵԳԻՆ.—Յեկեղեցիներում ել յեղմար, պապի:

ՆԻԿՈՂՈՍ ԱՊԵՐ.—Բանս հատել եր—յեկեղեցի յեմ գնում:

ՍԱՄՄՈՒՆ.—Կես դյուժին գարեջուրը տարվեցիր, Գարեգին:

ԳԱՐԵԳԻՆ.—Եդ հիմի կտեսնենք (ծերունուն): Ասա հլա, պապի,
դու տերտերի մասին ինչ կարծիք ունիս—պետք ե թոռանդ
կնքել, թե չե:

ՆԻԿՈՂՈՍ ԱՊԵՐ.—Սպասիր... (մտածում է): Աստված կմ... Ո՞վ
գիտի: Տերտերներ կմն... Կան, Ասում ես՝ պետք ե կնքել
թե չե...

ԱԼԵՔՍԱՆ.—Հը, ասա:

ՆԻԿՈՂՈՍ ԱՊԵՐ.—Կարծես թե պետք ա, բայց կարծես թե
պետք ել չե:

ԱՇԽԵՆ.—Այ, պապի, լավ կանելիր քո պառավին ասելիր, վոր
ջահելների գլխին ավետարան չկարդա: Ալեքսանը չի ու-
զում թոռիդ կնքի, իսկ պառավը յերկու վոտը մի մաշիկ ե
դրել թե՝ կամ պիտի կնքեմ, կամ ձեզ թողնեմ-հեռանամ:
Վարսենիկն ել, իհարկե, առաջմ նրա ասածն ե կրկնում:
Դու մի նրան համոզելիր:

ՆԻԿՈՂՈՍ ԱՊԵՐ.—Ըստեղ, գե, ջահելների գործ ա, ախպեր, մեր
ինչ բանն ա խառնվենք: Մենք ապրել ենք մեր գիտեցածի
պես, դուք ել ապրեցեք ձեր ուզած ձեռով: Նրան սկի կա-
րելի՞ յա համոզել. նա ուրիշ տեսակ պառավ ա, ինձ սկի
կլսի՞: Եկեք համաձայնեցեք...

ՍԱՄՄՈՒՆ.—(Յատկում ե արորից, զլիսին խփելով): Ահա! Գտա:
Սպասեցեք:

ԳԱՐԵԳԻՆ.—Բոռ կծեց, ինչ ե:

ՍԱՄՄՈՒՆ.—Վոչ մի բոռ. հնարը գտել եմ: Սպասեք... Պապի, Ա-
լեքսան, Աշխեն... Յես գնում եմ հիմի բջիջ: Յեկող կիրակի
կարմիր կնունք ենք անում: Յեթե Աննա աքիրը հակառա-
կի, պապը նրա հախիցը կդա: «Չես ուզում, պառավ, կասի,
եղ կնունքը, դե արի բաժանվենք»: Եղ բանով նրա հախիցը
կդանք: Հը... ինչ... ինչպես...

ԱԼԵՔՍԱՆ.—Բան մտածեց...

ՆԻԿՈՂՈՍ ԱՊԵՐ.—Յես բան չհասկացա: Եղ, ուրեմն, յես քառ-
սուն տարի ապրել եմ կնկանս հետ—հիմի բաժանվեմ:

ՍԱՄՄՈՒՆ.—Հանաքով, պապի, հանաքով. աքիրը կվախենա ու
կհամաձայնի:

ԳԱՐԵԳԻՆ.—Ճիշտ ես ասում, կոմիերիտ. յերեսում ե, վոր գլխիդ
միջինը դարձան չի, այլ խոտ:

ՍԱՄՄՈՒՆ.—Հը, պապի, համաձայն ես:

ՆԻԿՈՂՈՍ ԱՊԵՐ.—Համաձայն համաձայն եմ, միայն թե պառավը
շատ կրարկանա:

ԱՇԽԵՆ.—Վոչինչ, կրարկանա յել, կհանգստանա յել:

ՍԱՄՄՈՒՆ.—Տեսար, Գարեգին. դե հիմի իմացիր, թե ում հետ
գործ ունես (գնում ե դիպի դուռը յեվ դիպչում Աննա ախորը
յեվ Վարսենիկին):

ՏԵՍԻԼ IX

ՆՈՒՅՆՔ, ԱՆՆԱ ԱՔԻՐ ՅԵՎ ՎԱՐՄԵՆԻԿ

ԱՆՆԱ ԱՔԻՐ.—Իստակ կատաղած ա, գետինը մտնես դու:
ՎԱՐՄԵՆԻԿ.—Բարով, հայրիկ (համբուրվում են): Հիմի ճաշը կը ե-
 րեմ: (Աջևնենին): Յերեխան հո լաց չի լեզր: Կաթ եր ուզում:
ԱՇԽԵՆ.—Ուզում եր ձենը բարձրացնի—հանգստացրի. հիմի քնած
 եւ (Դարեգինը լրագիրը բաց է անում ու կարդում):

ԱՆՆԱ ԱՔԻՐ.—Պատգամոր ես լեկել վորտեղ ես ման դալի:
ՆԻԿՈՂՈՍ ԱՊԵՐ.—Ենքան ման լեկա, վոտներումս հարաքարաթ
 չմնաց: Գլխավոր խորհուրդը գնացի, զավոր գնացի, թան-
 գարան գնացի... Պահ, քու տերը մեռնի, ինչե՞ր կար, ինչե՞ր...
ԱՆՆԱ ԱՔԻՐ.—Բա լեկեղեցիներն ել տեսամը...

ԳԱՐԵԳԻՆ.—(Յատկելով): Այ քեզ նորություն: Տեսեք, տեսեք,
 եր ծերուկը նշանավոր մարդ և դառել կարինանի հետ
 նկարված ել լրագրում: Քեզ ճանաչմած ես, պապի...

(Ընդհանուր կենդանուրյուն, բոլորը խմբվում են Դարեգինի
 յել ծերուկու ըուրցը):

ՆԻԿՈՂՈՍ ԱՊԵՐ.—(Հուզված): Դրուստ վոր, այ տղա, ես յես հմ,
 ես ել նախազեն: Ինչ դրուստ են նկարել (Առաջ է խուռամ
 Աննա ախորը): Տես հա, այ կնիկ, ինչի արժանացանք...
 (Արցուեթի միջից): Հմի մեռնեմ ել՝ ջանիս դարդ չի ընի:

ԳԱՐԵԳԻՆ.—Տես, աքիր, հալիվորդ վհնց վոր սաղ կենդանի կանգ-
 նած լինի... ես լրագիրն ամեն տեղ գնալու յե հիմի: ձեր
 գեղն ել ել ընկնելու...

ԱՆՆԱ ԱՔԻՐ.—Ոյ, տեր աստված, ես ինչ են արել, այ մարդ: Դու
 գող, ավագմկ ես, ինչ ե, վոր քեզ գաղեթ են քցել: Խալ-
 տառակեցիր դու մեղ սաղ գեղում: ել վհնց լերեամ յես են
 տեղերքը, հը: Վայ ինձ, վայ ինձ, վայ իմ անբախտ գլխին:

(Նիկողոս ապերը տարակուսած է: Դարեգինը ու Սամսոնը,
 փորերը բոնած, ծիծաղում են)

ՎԱՐՄԵԳՈՒՅՑ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՅԵՐՐՈՐԴ

ՏԵՍԻԼ I

ՆՈՒՅՆ ՍԵՆՅԱԿԻ: ԱԼԵՔՍԱՆՆ ՈՒ ԳԱՐԵԳԻՆԸ ՇՐՋՈՒՄ ԵՆ
 ՍԵՆՅԱԿՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ.—Այեքսան, կարծես լերեխա լինես. միթե չես տես-
 նում ինչ ե կատարվում Աշխենի հետ, չես զգում: Ի՞նչ ան-
 հասկացող մարդ ես: Հետևյալը հասկանալի յե:

ԱԼԵՔՍԱՆ.—Ի՞նչ ես ուզում ինձանից... Յես ու Աշխենը բարե-
 կամ ենք միայն. հինգ տարի յե, գործարան մտնելու որից
 մասաշում եմ նրան, և լերեք մաքովս չի անցել սիրո մա-
 սին խոսել նրա հետ: Խոստովանում եմ, նա ինձ գրագում
 եր, լերը կինս ու զոքանչս տեսարաններ ելին սարքում,
 ուզում ելին ինձ լրել կուսնու, փալասների հոգսերի
 մեջ, այդ ժամանակ յես ուզում ելի փախչել, ու մտածում
 ելի, վոր այ Աշխենը լերեկի կին կիներ և կարող եր բախ-
 տավորեցնել ինձ: Եսպես մի թեթև բան... Բայց սա սեր
 չեր: Իսկ վարսենիչը... Դու ինքդ տեսնում ես, վոր նա ել
 առաջլանը չի. նա սովորում ե, հետաքրքրվում ե հասարա-
 առաջլանը չի. նա սովորում ե, հետաքրքրվում ե հասարա-
 առաջլանը գործերով. մի քիչ ել—նա կը լի իսկական կին-ընկեր: Կական գործերով. մի քիչ ել—նա կը լի իսկական կին-ընկեր:

ԳԱՐԵԳԻՆ.—Եստեղ ամենազարմանալին են ե, վոր Աշխենն ինքը

գիտակցաբար քեզ մոտեցրել ե Վարսենիկին: Եղ կանանց

բանը չես հասկանում:

ԱԼԵՔՍԱՆ.—Կար ժամանակ, վոր նա ուզում եր ոգուտ քաղել
 ընտանիքիս մեջ լեզր: անհամաձայնությունից: Բայց եղի
 մնաց են Աշխենը, վորին միշտ ել կարող եմ հարգել:

ԳԱՐԵԳԻՆ.—Դե, աչքակապուկ մի խաղա: Գնա ասա—եսպես-
 գիտակին: Վայ ինչ են ապացմունքը չունեմ: ել ին
 եսպես, շնորհակալ եմ, ել են զգացմունքը չունեմ:

ԱԼԵՔՍԱՆ.—Բայց ախր նա վորտեղ եւ ասել, թե ինձ սիրում եւ կամ չի սիրում:
ԳԱՐԵԳԻՆ.—Դու, իսկապես, հիմար ես, չալբաթ կնիկը պիտի գա վզովդ փաթաթվի ու «Ալեքսան ջան, ինս քեզ սիրում եմ»:
ԱԼԵՔՍԱՆ.—Զես կարում լուրջ խոսես, շարունակ հանաքներ ես անում:
ԳԱՐԵԳԻՆ.—Դու յել քիչ լրջություն արա, են ժամանակ ծիծաղն ու արտասուքն ել քիչ կլինի: Հետեւալը հասկանալի յեւ:
 (Մենում ե Վարսենիկը):

ՏԵՍԻԼ II

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ՎԱՐՄԵՆԻԿ

ԱԼԵՔՍԱՆ.—Հրես Վարսենիկն ել յեկավ:
ՎԱՐՄԵՆԻԿ.—Սաղ բագարը պտտեցի, զոռով ես կտորը գտա:
 Տես ինչ վերմակ եմ կարել յերեխին ես իրիկվա համար (ցույց ե տալիս կարմիր վերմակը): Լավ ե:
ԳԱՐԵԳԻՆ.—Այ, հենց եղ «լավը» պետք ե գրել վերմակի վրա,
 վոնց վոր դրոշակի վրա կգրին:
ԱԼԵՔՍԱՆ ՅԵՎ ՎԱՐՄԵՆԻԿ.—Ի՞նչո՞ւ...
ԳԱՐԵԳԻՆ.—(Հանդիսավոր նկարելով առաջին տառերը): Ուզում
 ես կարմիր կնունքով կնքել յերեխիդ—անպայման վերմակ
 կարիր: Դա հոկտեմբերյան պատվերն ե կարմիր մորը:
ԱԼԵՔՍԱՆ.—Սրամիտ չեր, Գարեգին: Բանը վերմակը չի, այլ են,
 վոր յերեխին վորդեգրելու յի գործարանը, կոլեկտիվը: Որո-
 րոցից նրա գլուխ ֆոփուալու յի կարմիր դրոշակը: Այ, դա-
 սակարգի փիլիսոփայությունն ինչումն ե:
ՎԱՐՄԵՆԻԿ.—Ինչպես թե, Ալեքսան, ախր առանց վերմակի կմըսի:
ԳԱՐԵԳԻՆ.—Բա Անսա աքոր բանը վոնց արիք:
 (Մենում ե Աննա ամիրը, բերում ե նոր բխած գարաներ):

ՏԵՍԻԼ III

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ԱՆՆԱ ԱՔԻՐ

ԱՆՆԱ ԱՔԻՐ.—Անսա աքիրն ի՞նչիդ ա պետք... Յես արդեն 55
 տարեկան եմ (Վարսենիկին): Եղ ի՞նչ փալաս ա... Յորդան
 չի... չի...

ՎԱՐՄԵՆԻԿ.—Յերեխի վերմակն ե, մայրիկ:
ԱՆՆԱ ԱՔԻՐ.—Տեր աստված, մի կարգին կտոր ել չի կարացել
 առնի: Եղ հո փետին կապելու, քուչեքում պտտելու բան ա:
ՎԱՐՄԵՆԻԿ.—Դու յել մայրիկ, շարունակ խոսում ես—ես եսպես
 չի, են ենպես չի: Մի քիչ սուս արա ելի:
ԱՆՆԱ ԱՔԻՐ.—Տես ե, ինչ վոր մերն ասի—վատ ա: Ի՞նչ ա պա-
 տահել քեզ: Աշխենը խելքից հանել ա համ: Տես, գլխիս գիր
 կարդացող ես դառել, բայց եկուց տոն ա, պոլերը չես ել
 մաքրել:
ԳԱՐԵԳԻՆ.—Անսա աքիր, փոխանակ հայուելու, ավելի լավ կա-
 նես գաթա տաս ուտենք: Յես անկնիկ մարդ եմ, վոչ թան
 ունեմ, վոչ ապուր. փորս վեց-վեց ե անում: Ու... Հետեւալը
 հասկանալի յեւ:
ԱՆՆԱ ԱՔԻՐ.—Ով ա քեզ արգելում, վոր կնիկ առնես: Այ, Աշ-
 խենի հետ պսակվիր, քեզ շատ հարմար ա: Նա յել քամու
 պես բան ա. վոչ տուն ունի, վոչ բուն ունի. գիրքը դնում ա
 թիկ տակ ու քիթը տնկում վեր...
 (Աննա ամիրը գնում ե դեպի դուռը)

ԳԱՐԵԳԻՆ.—Անսա աքիր, հարգելի. բա են բանից... (Ցույց ե տա-
 լիս բերանն ու փորը):

ԱՆՆԱ ԱՔԻՐ.—Տես անամոթին... Գնա կուխնին:
ԳԱՐԵԳԻՆ.—Շնորհակալ եմ, Անսա աքիր: (Մենում ե նոր բեկը):
ԱՆՆԱ ԱՔԻՐ.—(Թիվն ազատեալ): Զես քաշմ...

ՏԵՍԻԼ IV

ԱԼԵՔՍԱՆ ՅԵՎ ՎԱՐՄԵՆԻԿ

ՎԱՐՄԵՆԻԿ.—Ալեքսան, վերջին ժամանակներս դու կարծես փոխ-
 վել ես մի տեսակ...

ԱԼԵՔՍԱՆ.—Զի, Վարսենիկ, յես չեմ փոխվել, եղ քեզ թվում ե,
 վորովհետև դու, քեզ համար աննկատելի, դարձել ես ուրիշ:
 Նայիր մի քեզ—բոլորվին ուրիշ ես: Հիմի արդեն ել չես
 մսի, «ուզում եմ ու կինքեմ»: Զես ասի, չե...

ՎԱՐՄԵՆԻԿ.—Ի՞արկե—չե. յես համաձայն եմ միայն, վոր յեկե-
 դցին ավելորդ ե, կնունքն ավելորդ ե, բայց առանց աս-
 տծու—չգիտեմ ինչպես կընի... Վոր մտածում եմ—սարսա-
 գելի յի թվում:

ԱԼԵՔՍԱՆ. — Մի անգամից չել լինի: Կամաց-կամաց, եղտեղ ել կհասնես: Յես ել մի անգամից չեր վոր հրաժարվեցի: Ի՞նչ քան դարգանաս, ենքան շատ բան կիմանաս:

ՎԱՐՍԵՆԻԿ. — Քու խոսքերի մեծ մասը իմ չելի հասկանում, Ալեքսան: Բայց հիմի քիչ ու միշ հասկանում եմ: Այ, յեթե մի տարի յել սովորեմ, գուցե, ամեն ինչ հասկանամ:

ԱԼԵՔՍԱՆ. — Այս, անպայման (գրկում ու համբուռում ե: Մտնում է Աջևենը):

ՏԵՍԻԼ V

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ԱՇԽԵՆ

ԱՇԽԵՆ. — Կարծես նորապսակներ լինեք (արհեստական ծիծաղ): Առավոտից համբուրվում ես (Վարսենիկն ու Ալեքսանը շփորփած են): Ի՞նչ եք շփոթվում... Այ, ինչ յեկեք, բարեկամներ, մնաս բարով ասեմ ձեզ:

ՎԱՐՍԵՆԻԿ. — Վոնց թե «մնաս բարով»:

ԱԼԵՔՍԱՆ. — Ի՞նչ ե պատահել:

ԱՇԽԵՆ. — Առանձին վոչինչ: Կուսկոմն ուղարկում ե գլուղ՝ աշխատանքի:

ԱԼԵՔՍԱՆ. — Լուրջ ես ասում, Աշխեն:

ԱՇԽԵՆ. — Կարծում ես հանմաք եմ անում:

ՎԱՐՍԵՆԻԿ. — Ի՞նչ ես ասում, Աշխեն, յես քեզ ենպես եմ սովորել... Ի՞նչքան բան սովորեցի քեզանից:

ԱՇԽԵՆ. — Վոչինչ, մարդդ խելոք ե և քեզ սիրում ե, ինձ կփոխարինի:

ԱԼԵՔՍԱՆ. — Եղ գնալու մասին դու ի՞նքդ ես մտածել, Աշխեն:

ԱՇԽԵՆ. — Մինույն չեմ. Ի՞նչ տարբերություն կա վոր:

(Մտնում են Աննա ամիրն ու Գարեգինը):

ՏԵՍԻԼ VI

ՆՈՒՅՆՔ, ԱՆՆԱ ԱՔԻՐԸ ՅԵՎ ԳԱՐԵԳԻՆԸ

ԳԱՐԵԳԻՆ. — Այ ուտացրեց ինձ Աննա աքիրը հա... Յերկու յերեք որ հերիք եւ Հետելալը հասկանալի յե...

ԱՇԽԵՆ. — Մնաս բարով, Աննա աքիր, գնում եմ,

ԱՆՆԱ ԱՔԻՐԸ. — Բարի ճանապարհ, առաված քեզ հետ:

ԳԱՐԵԳԻՆ. — Բա ինչու չես նստում:

ԱԼԵՔՍԱՆ. — Ուզեմն, Աշխեն, մեզ թողնում ես մենակ ելի:

ԱՇԽԵՆ. — Վոչինչ: Քու հո մենակ չես մուռմ: Մենակը Գարեգիննե... Ուզում ես, Գարեգին, արի պսակվենք ու միասին գնանք գլուղ:

ԱՆՆԱ ԱՔԻՐԸ. — Շատ հարմար եք, խաչ, Պսակվեցեք ու խելքի լեկեք:

ՎԱՐՍԵՆԻԿ. — Ի՞նչ հանաքչին ես, Աշխեն. քեզ ջահել, գեղեցիկ մարդ ե հարկավոր:

ԳԱՐԵԳԻՆ. — Բա յես ծեր եմ. միայն 20... մինչև 60 տարեկամ եմ, վոչ ավելի. իսկ ինչ վերաբերում ե գեղեցկության—զեռ հայտնի չի, վոր փոակ հագնեմ, ցիլինդր ու ակնոց դնեմ—ի՞նչ կդառնամ... Յես կարծում եմ Մակդոնալդից պահա չեմ լինի, թեկուղ են ժամանակ գնա թագավորի ձեռը համբուրի:

ԱԼԵՔՍԱՆ. — Միենուցն ե, Աշխեն, առանց կնունքն անելու քեզ չենք թողնի գնաս: Զե դռն յել եղ բանը գլուխ բերողներից մեկն ես:

ԱՆՆԱ ԱՔԻՐԸ. — Կնունք... ի՞նչ կնունք: Յերբ ա..

ԱԼԵՔՍԱՆ. — Հանգստացիր, մարդիկ: Յես մոռացա քեզ ասել, վոր ես իրիկուն մեր գործարանի կլուրում յերեխին կնքելու յենք... Խորհրդալին ձեռվ:

ԱՆՆԱ ԱՔԻՐԸ. — Վոնց թե խորհրդալին ձեռվ:

ԳԱՐԵԳԻՆ. — Եսպես ելի, Աննա աքիր: Քու թոռին բերելու յեն կլուք, ենտեղ մեկը մառ պիտի ասի, մուզիկ պիտի ածեն—ինտերնացիոնալ գրոշակներ կը լինի, Քավորը թջիքը կը լինի, քավորկինը—հեղափոխությունը (յերգում ե). «Վոչ վոք չի տա մեզ ազատություն»... Ուռա, Աննա աքիր...

ԱՆՆԱ ԱՔԻՐԸ. — Դա թատրոն ա, ի՞նչ ա եղպես: Քորփա յերեխի զլսին սատանի խաղ եք ուզում սարքել: Մեռնեմ ել—չեմ թողնի, Վարսենիկ, աղջի, ի՞նչ ես սուս կացել. ըեխեն քմւնն ա, թե շանը... Առանց աղոթք, առանց տերտեր... Զե, ձեզ մատադ. քանի յես կենդանի յեմ—եղ բանն ըլնելու բան չի...

ՎԱՐՄՍԵՆԻԿ.—Մի տաքանա, մալրիկ... Հիմի ժամանակն եղան ե.
այ, հրե մեր հարևաններն եւ են կլուրում կնքել: Յերեխի
մորն ել հլա մի կտոր են բաշխել:

ԱՆՆԱ. ԱՔԻՐ.—Զենդ կտրի... Եղ քու վարժուհուցն ես սովորել հա...

ՎԱՐՄՍԵՆԻԿ.—Մալրիկ, Աշխենն եստեղ բոլորովին մեղք չունի:
Յես ինքս հասկանում եմ արդեն, վոր տերտերների հիմար
բաները պիտի թողնենք:

ԱՆՆԱ. ԱՔԻՐ.—Հիմար... Ումից եմ լսում: Հարազատ աղջկա-
նից: Ափսոս, հերդ ըստեղ չի, վոր մի մազիցք բռնի ու
քաշ տա, անծիծված աստվածուրաց:

ՎԱՐԵԳԻՆ.—Մի բարկանա, աքիր, կամաց:

ԱՆՆԱ. ԱՔԻՐ.—Հեռացիր, նղովված:

ՎԱՐՄՍԵՆԻԿ.—(Լալիս ե). Հալրիկը կողմանակից ե եղ կոսունքին:

ԱՆՆԱ. ԱՔԻՐ.—Ինչ եք իւղան հալիվորի վրա շառ գցում... Եղան
բան ըլնի, ել ձեր տունը վոտ չեմ կոխի... Բոլորդ ել դժոխքի
փակ ըլնեք: Ներիր, ներիր ինձ, տեր, մեղավորիս...

(Խաչակներում ե՝ աչերը Մարքսի պատկերին հառած):

ՎԱՐԵԳԻՆ.—Եղ ում ես աղոթում, այ պառավ: Դա նկար ե, սրբի
պատկեր չի ախր:

ԱՆՆԱ. ԱՔԻՐ.—Թու, թու... թու... Ել յես եստեղ չեմ մնա. Ինց
հիմի գեղ կերթամ... քորբի հոգին ուզում են շներոց անեն.
այ շներոց ըլեք դուք (վուները զետին ե զարկում): Իսկ դու,
վարսենիկ, ել իմ աղջիկը չես: Պրծավ:

(Վարսենիկը լալիս ե: Մտնում են Նիկողոս ապերն ու Մարտիր):

ՏԵՍԻԼ, VII

ՆՈՒՑՆՔ, ՆԻԿՈՂՈՍ ԱՊԵՐ ՅԵՎ ՍԱՄՍՈՆ

ՍԱՄՍՈՆ.—Ես ինչ պատարագ ե ձեզ մսու:

ԱՇԽԵՆ.—Բոլորը կոունքի պատճառով եւ:

ԱՆՆԱ. ԱՔԻՐ.—(Նետվում ե դեպի ծերունին): Իսկ դու ուր ես կո-
րել քոփակ: Ժողովքներում ման ես զալի, իսկ աղջիկը
եստեղ աստծուն ուրացել ա (Վարսենիկին). Մի հլա հորդ
մոտեցի, տես վոնց առեխտ ջարդում:

ՆԻԿՈՂՈՍ ԱՊԵՐ.—Բան չեմ հասկանում. ենպես ես ձենդ գլուխդ
գցել վոնց վոր գեղական ժողովում ըլնես:

ԱՆՆԱ. ԱՔԻՐ.—Այ սարսադ, ըեխին ուզում են անտերտեր ու ա-
նաղոթք կնքեն ախր. սուրբ ավազանի տեղակ կոխելու լին
ինտերնացոլի մեջ:

ՍԱՄՍՈՆ.—(Հրամ ե Նիկողոս ապոր). Ակսի, Նիկողոս ապեր,
սկսի:

ՆԻԿՈՂՈՍ ԱՊԵՐ.—Ի՞նչ ինտերնացոլ

ԱՆՆԱ. ԱՔԻՐ.—Ինտերնացոլ ելի, ինտերնացոլ...: Այ, թող աղջիկդ
ասի:

ՆԻԿՈՂՈՍ ԱՊԵՐ.—Ես Աննեն ի՞նչ ա գյամը բաց թողել:

ԱՆՆԱ. ԱՔԻՐ.—Իսկ դու, շաշ, գետի պես կանգնի: Թե դու լիլ
ես նրանց հետ խոսքդ մին արել:

ՍԱՄՍՈՆ.—Ժամանակն ե, պապի, խոսի. ասա—նրանց հետը
նրանց հետ չեմ, բայց խանգարել չեմ ուզում:

ՆԻԿՈՂՈՍ ԱՊԵՐ.—Նրանց հետ չեմ, բայց խանգարել չեմ ուզում...
Խանգարել չեմ ուզում... .

ԱՆՆԱ. ԱՔԻՐ.—Ի՞նչ ես դուրս տալիս:

ՍԱՄՍՈՆ.—(Թելադրում ե). Խանգարել չեմ ուզում:

ՆԻԿՈՂՈՍ ԱՊԵՐ.—Մենք պառավելու ախր ինչի՞ խանգարենք
սրանց վոր:

ԱՆՆԱ. ԱՔԻՐ.—Վճաց թե խանգարել: Ես ըոպելին ձին լծի գնանք
գեղը, գնանք մեր տուն:

ՆԻԿՈՂՈՍ ԱՊԵՐ.—Վճաց թե տուն: Եստեղ նոր տեսակի կնունք
են անելու, իսկ դու ուզում ես վախչես յերեխեքի մոտից:

ԱՆՆԱ. ԱՔԻՐ.—Ախ դու անամոթ. հերիք չի սաղ գեղի մեջ խալդ
ու խալտառակ արիր, հիմի լիլ եղան խոսքեր ես ասում
կնկանդ:

ՍԱՄՍՈՆ.—(Թելադրում ե). Յեթե չես ուզում—արի բաժանվենք,
ես ըոպելին բաժանվենք (հրամ ե Նիկողոս ապոր դեպի
աքիրը):

ՆԻԿՈՂՈՍ ԱՊԵՐ.—Աննա, զալմաղալ մի սարբի, արի համաձայ-
նիր, թող ինչ ուզում են, ինչ վոր լավ են, համարում, են
անեն (յետ յետ ե գնում):

ԱՆՆԱ. ԱՔԻՐ.—Ախր, այ շաշ, դու ի՞նչ զիտես, վորն ա լավ, վորը
վաստ:

ՍԱՄՍՈՆ.—(Ենթամ ե Նիկողոս ապոր). Ասա՝ արի բաժանվենք

ՆԻԿՈՂՈՍ ԱՊԵՐ.—Իսկ յեթե չես ուզում, արի...

ԳԱՐԵԳԻՆ.—Համարձակ յեղիք, պապի...

ՆԻԿՈՂՈՍ ԱՊԵՐ.—(Միանգամբ). Արի բաժանվենք:

ԳԱՐԵԳԻՆ.—Է՛լ. տեղը բերեց:

ԱՆՆԱ ԱԹԻՐ.—Վայ, հողն իմ գլխին (ընկնում ե արողի վրա յեվ փառները շարժում):

ԳԱՐԵԳԻՆ.—(Բոնում ե նրա վոտները). Մեքենան կանգնացրու:

(Վարսենիկը նետվում ե դեպի մայրը: Ծերութին օփորված է)

ՏԵՍԻԼ VIII

Մտնում են մի բանվոր յեվ կոմյերիտականներ՝ կարմիր դրոշակներով

ՔԱՆՎՈՐ.—Բանվորների ընդհանուր ժողովս սպասում ե յերեխին:
Կնքամերը—ԼԿՅԵՄ-ը պատրաստ ե նրան իր շարքերն ընդունելու:

ԱԼԵՔՍԱՆ.—Դե, Վարսենիկ...

ԱՆՆԱ ԱԹԻՐ.—Ոհ-հո-հո... Վողործած տեր:

(Վարսենիկը վերցնում ե վերմակը յեվ յերեխային փաքարում):

ԳԱՐԵԳԻՆ.—Ե, Աննա աքիր, ճրագիդ ձեթը շատ քիչ եր, մինչև վերջը չհերքեց: Նիկողոս ապեր, պառավին բեր:

ՆԻԿՈՂՈՍ ԱՊԵՐ.—Գնանք, գնանք, Աննա:

ԱՇԽԵՆ. —Մնաս բարով, Ալեքսան. հաջողություն: Մնաս բարով,
Վարսենիկ:

ԱԼԵՔՍԱՆ.—Շնորհակալ եմ, Աշխեն. հո վերջին անգամը չենք
տեսնվում:

ԳԱՐԵԳԻՆԻԿ.—Ի՞արկե, չե (յերեխային վերցնում ե յեվ Ալեքսանի
հետ մտնում դրուակի տակ: Նիկողոս ապերն ու Գարեգինը
բարձրացնում են Աննա անորը):

ՆԻԿՈՂՈՍ ԱՊԵՐ.—Ե, Աննա, մեծերը պառավում են, ջահելները
ծաղկում:

ԳԱՐԵԳԻՆ.—Հետեւալը հասկանալի յե...



ՀՀ Ազգային գրադարան



NL0312438

САГИД
160



ЧИСЕЛ 30 ЧПМ.

857

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТУ
ВОДОНОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

1
2